

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

### «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը»

Հունիսի 25-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» թեմայով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն էր՝

\* ձևավորել Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության պահպանման արդի հիմնախնդիրների և զարգացման գերակայությունների գիտական քննարկումների միջավայր:

\* ներկայացնել Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության դերը տարածաշրջանի պատմական գործընթացների ձևավորման և զարգացման համակարգում:

\* նպաստել պատմագիտության, հայագիտության տարբեր ոլորտների մասնագետների գիտական և գործնական կապերի հետագա ընդլայնմանը և խորացմանը:

\* մշակել ժամանակակից մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումներ՝ գործողությունների միասնական պլանի և ռազմավարական ծրագրերի նախապատրաստման համար:

Ինչպես նշեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, «Գիտաժողովի թեման չափազանց ընդգրկուն է. այն ներառում է պատմություն և բանասիրություն, հնագիտություն և ազգագրություն, արվեստ և ճարտարապետություն:

Այս կերպ մենք ցանկանում ենք նպաստել պատմագիտության, հայագիտության տարբեր ոլորտների մասնագետների գիտական և գործնական կապերի հետագա ընդլայնմանը, մշակել արդի մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումներ՝ գործողությունների միասնական պլանի և ռազմավարական ծրագրերի նախապատրաստման և մշակման համար»:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի կարծիքով գիտաժողովը խորհրդանշում է Հայկական լեռնաշխարհի բազմադարյան ժառանգությունը պահպանելու, ուսումնասիրելու, վերականգնելու, օգտագործելու և ժամանակակից կարևոր առաքելությունը:

Միջազգային գիտաժողովին ողջունելի ուղերձ էր հղել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Գիտաժողովի ընթացքում Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությանը՝ արվեստին, ճարտարապետությանը, պատմությանը, հնագիտությանը, ազգագրությանը ու թանգարանագիտությանը նվիրված զեկուցումներով հանդես եկան ինչպես Հայաստանի և Արցախի տարբեր գիտական և ուսումնական հաստատությունների գիտնականներ, այնպես էլ Ռուսաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ուկրաինայից ժամանած գիտնականներ:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ-ն, Երևանի պետական համալսարանը, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը և Արցախի պետական համալսարանը:

Հունիսի 25-ին և 26-ին գիտաժողովի աշխատանքները՝ պատմություն և բանասիրություն, հնագիտություն և ազգագրություն, արվեստ և ճարտարապետություն ուղղություններով, ընթացան Երևանում, իսկ հունիսի 28-ին և 29-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին Ստեփանակերտում: Նախ՝ ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում և ապա՝ Արցախի պետական համալսարանում:

Գիտաժողովի ընթացքում և ավարտին մասնակիցները հնարավորություն ստացան տպավորվել և սքանչանալ Հայաստանի և Արցախի պատմամշակութային հուշարձաններով:

(Շարունակությունը  
կարդացեք 2-րդ էջում)

2012-ին լրանում է Սայաթ-Նովայի (1712-1795) ծննդյան 300-ամյակը, որի կապակցությամբ ստեղծվել է պետական հոբելյանական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Հոբելյանական միջոցառումների շարքում 2012թ. հունիսի 21-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան:



## ՄԱՋՅԱԹ ՆՈՎԱ - 300

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը նշեց, որ դեռևս 1913-14 թթ. Թիֆլիսում Հայ գրողների կովկասյան ընկերությունը Հովհ. Թումանյանի գլխավորությամբ կազմակերպեց մի շարք ցերեկային, երեկոյան, ժողովներ և նիստեր, որոնց շնորհիվ Սայաթ-Նովայի անունը, նրա ստեղծագործությունները հանվեցին մոռացությունից, մեծ հետաքրքրություն առաջացրին հայ և վրաց մտավորականության շրջաններում, Սայաթ-Նովային բերեցին իսկապես համաժողովրդական, համահայկական, համակովկասյան լայն ճանաչում: «Հենց այդ ժամանակ էր, որ վերջապես սպառվեց դեռևս 1852-ին Գ. Ավետիսյանի՝ փոքր տպաքանակով հրատարակված Սայաթ-Նովայի բանաստեղծությունների գրքույկը: Դրան հետևեցին Սայաթ-Նովայի հայերեն, ապա վրացերեն խաղերի ավելի մեծաքանակ հրատարակություններ: Հրատարակվեցին Սայաթ-Նովայի մասին Հ. Թումանյանի և Ն. Աղբալյանի ելույթներն ու հոդվածները, իսկ 1914-ի մայիսի 15-ին մեծ հանդիսավորությամբ բացվեց Սայաթ-Նովայի մարմարե մահարձանը, որի նախածննման և իրականացման աշխատանքներին գործուն մասնակցություն ունեցավ Գ. Բաշինջաղյանը: Այդ օրվանից սկիզբ դրվեց Վարդատոնի ամենամյա զեղեցիկ ավանդույթին, որ շարունակվում է մինչ օրս: 1963-ին մեծ շուքով նշվեց Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյա հոբելյանը...»:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավար, պրոֆեսոր Շահեն Շահինյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը հանդես եկավ «Սայաթ-Նովայի երգերի երաժշտագիտական հիմքերը» թեմայով զեկուցումով:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ.Աբովյա-

նի անվան ՀՊՄՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիսա Դուլիսանյանը «Չարլզ Դաուսեթի «Սայաթ-Նովա» մենագրությունը» բանախոսության մեջ ներկայացրեց 20-րդ դարավերջի անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաուսեթի «Սայաթ-Նովա» ծավալուն մենագրությունը (1997): Բարեխղճորեն անդրադառնալով սայաթնովագիտության ընթացքին՝ Դաուսեթը եզրակացնում է, որ Սայաթ-Նովան աշխարհի հանճարեղ բանաստեղծներից է, ցավոք, անհայտ շատերին:

«Խաղերում» գործածված որոշ բառերի (օրինակ՝ սուք, գեթ և այլն) բնագրային-իմաստային ճշգրտմանը, հեղինակի գործածած իմաստով հասկանալու հարցին էր նվիրված ՀՀ ԳԱԱ Հր.Ա. ճառչանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի «Բառաբանական ճշգրտումներ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի վերաբերյալ» զեկուցումը:

ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը «Սայաթ-Նովայի սիրերգությունը գրական ազգակցության համատեքստում» զեկուցման մեջ Սայաթ-Նովային ներկայացրեց որպես Աստվածաշնչի և սուրբգրական մեկնությունների, միջնադարի հայ քնարերգության լավագույն ավանդների շարունակող, ով խոր ազդեցություն է թողել հայ քնարերգության զարգացման հետագա ընթացքի վրա:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանը «Գրիգոր Շարբաբյանի «Խալխի նոքար» պիեսի բեմադրությունը թիֆլիսահայ բեմում» զեկուցման մեջ անդրադարձավ 1929-ին Թիֆլիսի Հայպետդրամայում բեմադրված Գրիգոր Շարբաբյանի «Խալխի նոքար Սայաթ-Նովա» պիեսին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագի-

# Ականավոր գիտնականը և ճարտարագետը

(Սկզբը 1-ին էջում)

«Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով միջազգային գիտաժողովը աշխատանքների ավարտին ընդունեց բանաձև, որում ասված է.

## Բանաձև

2012 թ. հունիսի 25-ից 29-ը երևանում և Ստեփանակերտում «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով ՀՀ, ԼՂՀ և արտերկրի շուրջ 100 գիտնականների մասնակցությամբ կայացած միջազգային գիտաժողովը, ելնելով ներկայացված գեկուցումներում առաջադրված հարցադրումներից, որոշեց.

ա. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ իր բնիկ հայրենիքում Հայկական լեռնաշխարհում, հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության պահպանման արդի հիմնախնդիրների գիտական քննարկումների միասնական միջավայր ձևավորելու և զարգացման գերակայությունների ապահովման ուղղությամբ:

բ. Հայագիտության կարևոր խնդիրը համարել համաշխարհային քաղաքակրթության զարգացման ասպարեզում հայոց պատմամշակութային ժառանգության տեղի ու դերի արժևորումը, ինչպես նաև տարածաշրջանի պատմական գործընթացների համակարգում ըստ ամենայնի ներկայացումն ու կարևորումը:

գ. Նպաստել հայ պատմագիտության, հնագիտության, բանասիրության, մշակութաբանության, արվեստի, ճարտարապետության և հայագիտության այլ ոլորտների մասնագետների գիտական և գործնական կապերի հետագա ընդլայնմանն ու խորացմանը, քաղաքական ու կիրառական հայագիտության զարգացմանը:

դ. Ելնելով արդի մարտահրավերներին դիմակայելու, մասնավորապես թուրքական և ադրբեջանական պատմագրության և քաղաքական շրջանակների կողմից իրականացվող կեղծարարությանը հակահարված տալու անհրաժեշտությունից՝ մշակել մոտեցումներ հետագա գործողությունների միասնական ռազմավարական ծրագրերի նախապատրաստման և իրականացման համար:

ե. Պարբերաբար հրավիրել միջազգային գիտաժողովներ, հրատարակել Հայկական լեռնաշխարհի հայոց պատմամշակութային ժառանգությունը լուսաբանող աշխատություններ, իրականացնել հայագիտության համակողմանի զարգացումն ապահովող այլ միջոցառումներ:

«Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներ Երևան - Ստեփանակերտ

Լրացավ էլեկտրամեխանիկայի, ավտոմատացված համակարգերի և մոդելավորման բնագավառի ականավոր գիտնական, Հայաստանի ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսոր Հարություն Արտաշեսի Թերզյանի 80-ամյակը:

1955-ին, ավարտելով ԵրՊԻ-ի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, նա գործուղվում է աշխատանքի Հայէլեկտրագործարանի հատուկ կոնստրուկտորական բյուրոյում: 1957-ին, երբ Հայաստանում նկատվում էր էլեկտրամեքենաշինության և սարքաշինության բնագավառներում զարգացման կտրուկ աճ, նա տեղափոխվեց Կոմպլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական նոր հիմնադրված ինստիտուտը, որտեղ անցավ մեծ ճանապարհ՝ ավագ ճարտարագետից մինչև հաշվողատեսական բաժնի ղեկավար՝ ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարության ենթաշրջանի ավտոմատացված նախագծման համակարգերի գլխավոր կոնստրուկտոր:

Այդ տարիներին սկսեց ձևավորվել ակադեմիկոս Հ. Թերզյանի լայն ու բազմազան գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Հ. Ա. Թերզյանը շարունակել և զարգացրել է ակադեմիկոսներ Ա. Գ. Իոսիֆյանի և Վ. Ալեքսեևսկու գիտական ավանդույթները, որոնք լայն ճանաչում էին ստացել Հայաստանի սահմաններից դուրս և տարածում գտել միութենական մասշտաբով: Նա թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1964-ին էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում (Մոսկվա), դոկտորականը՝ 1980-ին Մոսկվայի էներգետիկական ինստիտուտում:

Հ. Ա. Թերզյանը բնօրինակի և մոդելի կառուցվածքային լրիվ համապատասխանության հիման վրա էլեկտրամագնիսական համակարգերի պրոցեսների և մագնիսական դաշտերի մոդելավորման հեռանկարային ուղղության հիմնադիրներից է: Առաջադրված կառուցվածքային մոտեցման հիման վրա Թերզյանի և աշակերտների ջանքերով ստեղծվել են անալոգային յուրահատուկ մոդելավորող սարքավորումներ, որոնք արդյունավետ միջոց են օպտիմալ որոշումների ընդունման ոլորտում:

Հարություն Թերզյանի կողմից բաբախող հոսքով ինդուկտորային մեքենաների հիմնադրած տեսության շնորհիվ ԿԵՀԳԻ-ում ստեղծվել են էլեկտրական մեքենաների բարձրահաճախական կերպափոխիչներ, որոնք թողարկվեցին «Հայէլեկտրամեքենա» ձեռնարկությունում և լայն կիրառություն գտան արտադրության տարբեր ծյուղերում:

Մեծ ճանաչում ստացան ակադեմիկոս Թերզյանի աշխատանքները ավտոմատացված համակարգերի ոլորտում:



Գիտնականը մեծ ներդրում ունի նախագծակոնստրուկտորական աշխատանքների ավտոմատացման տեսության զարգացման գործում: Նրա կողմից առաջարկվել են օպտիմալացման որոնողական մի շարք արդյունավետ մեթոդներ:

Պրոֆեսոր Թերզյանի ղեկավարությամբ ստեղծվել և իրականացվել են կլաստերային ճարտարապետության բազմապրոցետորային համակարգում աշխատող որոշումների ընդունման գույապեղ ալգորիթմներ, իսկ նրա կողմից մշակված գրիդ-ենթակառուցվածքները ներկայացնում են հաշվողական հզոր ռեսուրսներ ինժեներական ասպարեզում:

Հարություն Թերզյանը հիմնադրել է նախագծման և գիտական հետազոտությունների ավտոմատացված համակարգերի գիտական խոշոր դպրոց: Կոմպլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում նրա ղեկավարած կոլեկտիվը ճանաչվեց գլխավորող կազմակերպություն, իսկ ինքը՝ նշանակվեց գլխավոր կոնստրուկտոր:

Պրոֆեսոր Հ. Թերզյանը 1993-ից մինչև 2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ պրոռեկտոր գիտության գծով: Այդ տարիներին նա մեծ ներդրում ունեցավ ՀՀ-ում գիտության զարգացման մեջ՝ նպաստելով գիտահետազոտական աշխատանքների ընդլայնմանը, հաջողությամբ իրականացրեց մագիստրատուրայի, ասպիրանտուրայի համալիրի ղեկավարումը:

Հ. Ա. Թերզյանի գրչին են պատկանում 125 գիտական աշխատություններ, այդ թվում՝ 4 մենագրություն, 5 հեղինակային վկայագրեր և գյուտեր: Նրա ղեկավարությամբ թեկնածուական աշխատանքներ են պաշտպանել շուրջ քսան ասպիրանտներ: Նա ատենախոսությունների պաշտպանության մասնագիտացված խորհրդի նախագահն է: Երկար տարիներ ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԳԱ ԳԱ «Տեխնիկական գիտություններ» տեղեկագրի խմբագրի տեղակալն է, միջազգային ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

Ակադեմիկոս Հ. Ա. Թերզյանի գիտական և հասարակական գործունեությունն արժանացել է պետական բարձր գնահատականի: Նա պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով: Նրան շնորհվել է ՀՀ նախագահի մրցանակ «Էլեկտրամեխանիկական համակարգերի մոդելավորում: Թվային մեթոդներ և լուծումներ» մենագրության համար:

Ջերմորեն շնորհավորելով ակադեմիկոս Հ. Թերզյանին, գիտնականին և մտավորականին նրա հոբբիյան կապակցությամբ՝ Հայաստանի գիտական և ճարտարագիտական հանրությունը մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք, գիտական նոր նվաճումներ հանուն հայրենի գիտության զարգացման և առաջընթացի:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Յուրի ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

## ՄԱՅՅԱԹ - ՆՈՎԱԹ - 300

➤ 1 տության դոկտոր Աննա Ասատրյանը «Սայաթ-Նովա» «Քանի վուրջան իմ» - Ա.Բաբաջանյան՝ «Էլեգիա» բանախոսության մեջ ներկայացրեց հայկական դաշնամուրային տրանսկրիպցիաների կայացման ու զարգացման գործում իր կարևոր տեղն ունեցած՝ Ա. Բաբաջանյանի նշանավոր դաշնամուրային «Էլեգիան» (1978), որը հեղինակը նվիրել է Արամ Խաչատրյանի հիշատակին՝ օգտագործելով Սայաթ-Նովայի «Քանի վուրջան իմ» երգի մեղեդին: «Էլեգիան» հարգանքի տուրք է Ա. Խաչատրյանին, խոստովանել է կոմպոզիտորը, որտեղ էս ու Սայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին»:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիկ Իսահակյանի «Սայաթ-Նովան Ավետիք Իսահակյանի ներաշխարհում» գեկուցումն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Ալ.Իսահակյանի «Սայաթ-Նովա, Սայաթ-Նովա, դուր չես մեռել, Սայաթ-Նովա» բանաստեղծությունը (1899) և «Աննա Սայաթ-Նովա» էսսեն (1945):

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի «Սայաթ-Նովան և Սերգեյ Փարաջանովը» գեկուցումը խարսխված էր երկու արվեստագետների ստեղծագործական ճակատագրերի, ստեղծագործական ինքնատիպության համադրման սկզբունքի վրա:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ալինա Փահլևանյանը «Սայաթ-Նովան հայ երաժշտագիտության մեջ» գեկուցման մեջ անդրադարձավ Սայաթ-Նովային նվիրված երաժշտագիտական ուսումնասիրություններին՝ առանձնացնելով Մ.Աղայանի, Բ. Զուլնարյանի և Ն.Թահմիզյանի աշխատությունները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Անահիտ Զբյանը ներկայացրեց «Արաբսի Օհանյանի «Սայաթ-Նովա» օպերետը եգիպտահայ բեմում» գեկուցումը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Սուսաննա Հովհաննիսյանը «Սայաթ-Նովան Թումանյանի կյանքում» բանախոսության մեջ բանասիրական հանգամանակից վերլուծությամբ և նորահայտ փաստերով անդրադարձավ Թումանյանի պոեզիայում Սայաթ-Նովայի սիրերգության ազդեցություններին, աշուղ-բանաստեղծի ժողովրդականացման ուղղությամբ նրա ծավալած գործունեությանը և Սայաթ-Նովայի գիտության ասպարեզում Թումանյանի շուրջ երկու տասնյակի հասնող հոգվածների, ելույթների և ուսումնասիրությունների նշանակությանը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Սուսաննա Հովհաննիսյանը «Սայաթ-Նովան Թումանյանի կյանքում» բանախոսության մեջ բանասիրական հանգամանակից վերլուծությամբ և նորահայտ փաստերով անդրադարձավ Թումանյանի պոեզիայում Սայաթ-Նովայի սիրերգության ազդեցություններին, աշուղ-բանաստեղծի ժողովրդականացման ուղղությամբ նրա ծավալած գործունեությանը և Սայաթ-Նովայի գիտության ասպարեզում Թումանյանի շուրջ երկու տասնյակի հասնող հոգվածների, ելույթների և ուսումնասիրությունների նշանակությանը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Կարոյան Դևրիկյանի «Սայաթ-Նովա. Մշո Սուրբ Կարապետի ուխտավորը» գեկուցումը նվիրված էր «Մշո Սուրբ Կարապետ» սկսվածքով բանաստեղծությանը, որը ցույց է տալիս Սայաթ-Նովայի՝ հայ միջնադարյան մշակույթի և Ս.Կարապետի մասին եղած միջնադարյան մեկնությունների և ժողովրդական ավանդությունների քաջիմացությունը:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր Միխայիլ Կոկժանը «Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան» գեկուցման մեջ անդրադարձավ Հակոբ Խանջյանի լիբրետոյի հիման վրա ստեղծված և Երևանի օպերային թատրոնի կողմից ներկայացված օպերային թատերերգությանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

րային թատրոնում 1969-ի մայիսի 13-ին և 15-ին բեմադրված օպերային, որտեղ կոմպոզիտորն օգտագործել է Սայաթ-Նովայի ինքնաստեղծ մեղեդիները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանի «Սայաթ-Նովայի երգերի երաժշտատեսական համալիր վերլուծության փորձ «Քանանչա» երգի օրինակով» գեկուցումը նվիրված էր «Քանանչա» երգի բանաստեղծական և տաղաչափական հատկանիշների բացահայտմանը:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի հնչյունական առանձնահատկությունները» բանախոսության մեջ, համակարգային տեսքի բերելով Սայաթ-Նովայի հայերեն խաղերին նվիրված աշխատություններում քննվող հնչյունական իրողությունները՝ ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, երկբարբառներ, դրանց հնչյունափոխությունը, համեմատեց թիֆլիսահայ բարբառում գործառնող և արևմտահայ ու արևելահայ տարածքների հայ բարբառներին բնորոշ իրողությունները:

Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող



# ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

## Սպարտակ Գևորգյան

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ֆիզիկոս Սպարտակ Գևորգյանը ծնվել է 1948թ. մարտի 15-ին Խորհրդային Հայաստանում, Լոռու մարզի՝ Արեգունի լեռան ստորոտում գտնվող Լեջան գյուղում:

Ծնողները՝ Անահիտ և Շաքար Գևորգյանները, կրթություն չունենին, կոլտնտեսականներ էին և չէին կարող ազդել Սպարտակ Գևորգյանի մասնագիտական ընտրության վրա: Սակայն նրանք կարողացել էին իրենց որդու մեջ դաստիարակել այն բարձրագույն արժեքները, որոնց անունն է՝ պարզություն, մաքրություն, աշխատասիրություն:

Սպարտակը նախնական կրթությունը ստացել է Լեջանի դպրոցում, ամենասիրած առարկան հայոց լեզուն էր, բանգի հայոց լեզվի ուսուցչուհի էմմա Թորոսյանը ծանախիտ ուսուցչուհու և մանկավարժի տիպար էր:

Հատկանշական է, որ հաճախ ծակատագիրն է որոշում մարդու մասնագիտական ընտրությունը: Սպարտակ Գևորգյանը, որքան էլ տարօրինակ հնչի, ֆիզիկայից հիմնարար կրթություն չի ստացել: Նա ֆիզիկա է սովորել ինքնուրույն, սկզբում որպես հոբբի, հետագայում նաև գիտական աշխատանք կատարելու անհրաժեշտությունից դրդված:

Ութերորդ դասարանն ավարտելուց հետո Սպարտակ Գևորգյանն ընդունվեց ռադիոէլեկտրական տեխնիկում՝ ռադիոսարքաշինություն մասնագիտության բաժինը: Այս ընտրությունը մեծ եղբոր խորհրդով էր: Տեխնիկումից անմիջապես հետո արդեն իր ցանկությամբ դիմեց պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոսարքերի նախագծման բաժին:

Պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո Սպարտակ Գևորգյանն ընդունվեց Լենինգրադի էլեկտրատեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրան: Թեման վերաբերում էր սիլիցիումի հիման վրա գերաբոր հաճախականության (ԳԲՀ) սարքերի մշակմանը: Այն պահանջում էր խոր գիտելիքներ կիսահաղորդիչների ֆիզիկայից: Հենց այստեղ էր, որ Սպարտակ Գևորգյանի համար սկսվեց իսկական կիրառական ֆիզիկան, որն ուղեկցեց նրան ողջ գիտական գործունեության ընթացքում: 1977թ. նա հաջողությամբ պաշտպանեց գիտական թեզը՝ ստանալով տեխնիկական գիտությունների

թեկնածուի աստիճան: Ասպիրանտուրան ավարտելուց հետո տարբեր ժամանակներում զբաղվել է ինտեգրալային օպտիկայով, օպտիկական ղեկավարմամբ ԳԲՀ կիսահաղորդչային սարքերով, բարձր ջերմաստիճանային գերհաղորդիչների, ֆերոէլեկտրիկների և բոլորովին վերջերս՝ պիեզոէլեկտրիկ ու բազմաֆերոիկ նյութերի հիման վրա ղեկավարվող ԳԲՀ սարքերի մշակումով: Բոլոր դեպքերում հիմնական սկզբունքը եղել է նույնը՝ ուսումնասիրել և օգտագործել նոր ֆիզիկական էֆեկտները տարբեր նյութերում՝ նոր ղեկավարվող ԳԲՀ սարքեր

որ գիտական արդյունքներն օգտագործվեն արտադրության մեջ: Այս տեսակետից արդյունավետ է համարում իր աշխատանքը էրիքսոնում: Էրիքսոնի միջոցով նա պատենտավորել է ավելի քան երեսուն նորարարական առաջարկություն: Սպարտակ Գևորգյանը մեծապես կարևորում է առանձնապես վերջին տասը տարիների արդյունքները ֆերոէլեկտրիկների բնագավառում, որտեղ, սկսելով հիմնարար ֆիզիկական հետազոտություններից, մշակվել են ԳԲՀ սարքեր և ներդրվել արտադրության մեջ: Արդյունքներն ամփոփվել են երկու մենագրություններում, որոնցից մեկը արդեն հրատարակվել է Springer-ի կողմից, իսկ մյուսը պատրաստ է հրատարակության: Սպարտակ Գևորգյանը հեղինակ է չորս հարյուր հիսունից ավելի գիտական աշխատությունների, որոնք հրատարակվել են հիմնականում առաջատար միջազգային ամսագրերում և գիտաժողովների նյութերում:

Սպարտակ Գևորգյանը ոչ մի օր չի ընդհատել իր կապը մայր հայրենիքի հետ: Նա նախաձեռնել է INTAS նախագծեր, որում ընդգրկվել և ֆինանսավորվել են ակադեմիկոս Վ.Հարությունյանը և պրոֆեսոր Վ.Բունիաթյանը: Ներկայումս շարունակվում է համագործակցությունը պրոֆեսոր Բունիաթյանի և նրա ամբիոնի աշխատակիցների հետ:

Սպարտակ Գևորգյանը գտնում է, որ եթե չլիներ իր մեծ ընտանիքի աջակցությունը, ինքը դժվար թե հասներ գիտական այն բարձունքին, որն ունի այսօր: Նախ՝ եղբայրներն ու քույրերը նրա բոլոր նախաձեռնությունների ժամանակ եղել են կողքին, այնուհետև կինը, ով համբերատար, անտրտունջ հոգացել է ընտանիքի և երեխաների հոգսերը: Սպարտակ Գևորգյանի գավալները ինքնուրույն են ընտրել իրենց մասնագիտությունը, նա չի փորձել ազդել նրանց մասնագիտական ընտրության վրա: Միայն մեծ տղան է, որ երկար սպասումներից հետո որոշեց ֆիզիկոս դառնալ: Նա ֆիզիկոսին հատուկ անալիտիկ մտածելակերպ ունի:

Հաշվի առնելով Սպարտակ Գևորգյանի գիտական, մանկավարժական, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Սպարտակ Գևորգյանը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում ֆիզիկայի ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ  
Պատմական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաբարտուղար



նախագծելու համար: ԳԲՀ տեխնիկական իմանալուց բացի այն պահանջել է խոր իմացություն պինդ մարմնի ֆիզիկայում: Մի խոսքով, նա ստիպված, բայց մեծ հաճությամբ խորացել է կիրառական ֆիզիկայում: 1992-1993թթ. նա դասավանդել է Հայաստանում՝ պոլիտեխնիկական համալսարանում, զուգահեռ դասավանդելով նաև Սանկտ Պետերբուրգի էլեկտրատեխնիկական համալսարանում: Սպարտակ Գևորգյանը 1982թ. ստացավ դոցենտի աստիճան:

Գործընկերների հրավերով Սպարտակ Գևորգյանը 1993թ. կարճ ժամանակով, գիտական աշխատանք կատարելու համար, մեկնեց Շվեդիա: Հետո այդ կարճ ժամանակը երկարեց ու էլի երկարեց... Հիմա նա մշտական բնակություն է հաստատել Շվեդիայի Գյոթեբորգ քաղաքում: Սպարտակ Գևորգյանը Չալմերս տեխնոլոգիական համալսարանի միկրոտեխնոլոգիայի և նանոտեխնոլոգիայի բաժնի պրոֆեսոր է:

Սպարտակ Գևորգյանը միշտ ձգտել է չանել գիտություն հանուն գիտության: Նրա համար կարևոր է,

## ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը համալրվեց համակարգչային սենյակով և Wi-Fi անկյուններով

Հունիսի 3-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հարազատ մագիստրոսներին համախմբելու հրաշալի առիթ ուներ: Չնայած ամառային արձակուրդին՝

անկյուն է ստեղծվել գիտակրթական կենտրոնի կոնֆերանս-դահլիճում: ՏՏ լաբորատորիային տրամադրվել է նաև մեկ ինտերակտիվ գրատախտակ: Գիտակրթական միջազգային



կենտրոնում ՎիվաՍել-ՄՍՍ-ի կողմից ընդհանուր առմամբ արվել է 3,5 միլիոն դրամի ներդրում:

Ներկայումս փաստեցին, որ բարձրագույն կրթական հաստատություններում Wi-Fi անկյուններ և համակարգչային լսարաններ ստեղծելու գաղափարը նպատակ ունի օգնելու ուսանողներին և դասախոսական անձնակազմին՝ ստեղծելու հաղորդակցության «անսահման փափակ» հնարավորություն:

«Արտասահմանում Wi-Fi-ը համարվում է ինտերնետ կապի առաջնային միջոց, և դրա առկայությունը

պարտադիր պայման է՝ կրթական ռեսուրսները տեխնոլոգիաների հետ համատեղելու առումով: Այդ է պատճառը, որ ՎիվաՍել-ՄՍՍ-ը շարունակաբար աջակցում է բուհերին կրթական ոլորտում Wi-Fi տեխնոլոգիայի լայն կիրառման հարցում», - նշեց ՎիվաՍել-ՄՍՍ-ի գործադիր տնօրեն Ռալֆ Ֆիրիկյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը փաստեց. «Այսօր մեր գիտության և կրթության ոլորտում կան որոշակի դժվարություններ, որոնք պայմանավորված են անհրաժեշտ տեխնոլոգիաների ոչ բավարար ապահովվածությամբ: Նման աջակցություններն անհրաժեշտ և շատ տեղին են: Այն սերունդը, որն օգտվելու է այս բարե-


գործությունից, երկար տարիներ հիշելու է», - հավելեց Ռ. Մարտիրոսյանը:

«Գիտակրթական միջազգային կենտրոնում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը կօգնի ուսանողներին բացահայտելու իրենց ներուժը՝ խորացնելով ոչ միայն տեսական, այլև գործնական գիտելիքները», - ասաց ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը:

Համակարգչային լսարանը և Wi-Fi անկյունները տարատեսակ անլար միացմամբ սարքեր օգտագործողներին թույլ կտան օգտվել ՎիվաՍել-ՄՍՍ-ի ընձեռած լայն հնարավորություններից:

ԱՆԻ ԴԵՂՈՅԱՆ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻՇԻ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ



Են երկրաշարժի ժողովրդագրական հետևանքները, դրա ազդեցությունն աղետի գոտում, հատկապես նրա էպիկենտրոնում, «Արցախը փորձության ժամին» (նվիրված է Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում իրականացվող հայաթափության քաղաքականության մերկացմանը), «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» (նվիրված է ժողովրդագրության, պատմության և ժողովրդական տնտեսության հիմնախնդիրների համապարփակ քննարկմանը): Այն վերաբերում է բնակչության աճի և տեղաշարժերի, էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը) և այլն:

Ս. Բ. Խուլիսի 3-ին՝ կյանքի 83-րդ տարում, կյանքից հեռացավ ականավոր գիտնական ԶԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյանը:

Վ. Խոջաբեկյանը ծնվել է 1929 թ. մարտի 2-ին ԶԳԱԱ արդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում: Գերագույն դիպլոմով ԵՊՀ-ն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հայպետհրատում, իսկ 1960 թ. մինչև մահը աշխատել է ԶԳԱԱ Մ. Բոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, բաժնի վարիչ, փոխտնօրեն, տնօրեն, ապա՝ տնօրենի խորհրդական:

Վ. Ե. Խոջաբեկյանը հեղինակել է ավելի քան 500 գիտական աշխատանքներ, որոնցից մեկուկես տասնյակը մենագրություններ են: Դրանք հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լույս են տեսել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում և այլուր՝ նրան բերելով լայն ճանաչում:

Վ. Խոջաբեկյանի առաջին ուսումնասիրությունները նվիրված են աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, ներարտադրական ռեզերվների բացահայտմանը և գնահատմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվների ի հայտ բերելուն և օգտագործմանը, իսկ 1960-ական թվականներից սկսած՝ ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտմանն ու գնահատմանը: Նրա գրչին են պատկանում այնպիսի մենագրություններ, ինչպիսիք են «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985 թթ. Հայկական ԽՍՀ-ում», «Աղետ և մտահոգություն» (որում բացահայտվել

նրա բնակչության աճի և տեղաշարժերի, էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը) և այլն:

Վ. Խոջաբեկյանն արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար պարգևատրվել է ԶԳԱԱ Խորենացու մեդալով, բազմաթիվ պատվոգրերով: 1999 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից նա արժանացել է «1998 թ. Տարվա մարդ» կոչմանը:

Մեծ է Վ. Խոջաբեկյանի վաստակը նաև բարձրորակ տնտեսագետների, այդ թվում՝ գիտնականների պատրաստման գործում: Մոտ կես դար դասախոսել է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրա գիտական ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել բազում ասպիրանտներ ու գիտաշխատողներ:


Երկար տարիներ Վ. Խոջաբեկյանը եղել է ԶԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալը, բաժանմունքի բյուրոյի անդամ, ԶԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ատենախոսության պաշտպանության մասնագիտական խորհուրդների նախագահ:

Վ. Խոջաբեկյանն իր ողջ գործունեության ընթացքում աչքի է ընկել սկզբունքայնությամբ, գիտական բարեխղճությամբ, աշխատասիրությամբ ու պարտաճանաչությամբ:

Տաղանդավոր գիտնականի, գիտության կազմակերպչի, հայ ժողովրդի արժանավոր զավակի՝ Վլադիմիր Խոջաբեկյանի պայծառ կերպարը վառ կմնա նրան ճանաչողների, հարազատների, բարեկամների հիշողության մեջ:

ԶԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ  
ԶԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ  
ԶԳԱԱ Մ. ԲՈՒԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

## Ռաֆայել Պարույրի ՍՏԱՄԲՈԼՅԱՆ



Ռաֆայել Պարույրի Ստամբոլյանը ծնվել է 1922 թ. հուլիսի 22-ին Երևանում: Վաղ հասակից զրկվել է ծնողներից, ապրել է ազգականների մոտ:

1940 թ. ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական-պրոֆիլակտիկ ֆակուլտետը: Հայրենական պատերազմի հենց առաջին տարում՝ 1942 թ., Ստամբոլյանը ընդհատում է ուսումը և կամավոր մեկնում զործող բանակ՝ մասնակցելով Տուրակսի և Նովոռոսիյսկի համար մղվող մարտերին: Ծանր հիվանդության պատճառով նա զորացրվում է բանակից և շարունակում ուսումը: 1946 թ. ավարտում է ինստիտուտը և նշանակվում աշխատանքի Ռ.Ն. Գյանջեցյանի ղեկավարած հոսպիտալ թերապիայի ամբիոնում՝ որպես կլինիկական օրդինատոր:

1948 թվականին գործուղվել է Մոսկվա՝ Բուտկինի անվան կլինիկա, որտեղ Մ.Ս. Վոլսիի ղեկավարությամբ Ս. Բ. Բրաունի մոտ մասնագիտացել է կլինիկական էլեկտրասրտագրության ուղղությամբ: Վերադառնալով Հայաստան՝ նա ձեռնամուխ է լինում հիմնադրելու առաջին էլեկտրասրտագրական լաբորատորիան և շատ կարճ ժամանակահատվածում պատրաստում է ավելի քան 100 մասնագետ չափազանց կարևոր այդ բնագավառի համար: Լ.Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանական ինստիտուտի հիմնադրման տարիներին Ռ. Ստամբոլյանը հասարակական հիմունքներով կազմակերպում է սրտաբան մասնագետների պատրաստման ծառայություն՝ միաժամանակ զբաղվելով գիտական ակտիվ աշխատանքով:

Պրոֆեսոր Գյանջեցյանի թերապիայի դպրոցի ավանդույթների շարունակողն ու կատարելագործողը եղավ Ռ. Պ. Ստամբոլյանը: Նրա վաղ շրջանի գիտական աշխատանքները վերաբերում են բնաբուժությանը: Նա մշակել է դեղորայքային քնի արդյունավետությունը բարձրացնող տարբերակիչ մեթոդ, ինչպես նաև ստեղծել է էլեկտրաքնի ինքնատիպ սարք՝ տեխնիկայի բնագավառի աշխատողների համագործակցությամբ: Այս թեմայով 1952 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1953 թ. պրոֆեսոր Գյանջեցյանի հետ համատեղ հրատարակում է «Խոցային հիվանդությունը բնով բուժելու մեթոդիկայի մասին» մենագրությունը: Ռ. Պ. Ստամբոլյանի հետագա գիտական գործունեությունը վերաբերում է սրտաբանությանը:

1957 թ. առաջին անգամ մայրենի լեզվով լույս է տեսնում նրա «Օգնություն էլեկտրասրտագրություն ուսումնասիրողներին» ձեռնարկը, որը մեծ նշանակություն ունեցավ հայ բժիշկներին այս մեթոդին ծանոթացնելու գործում:

Սրտի իշեմիկ հիվանդության ախտորոշման և բուժման համակողմանի ուսումնասիրություններին է նվիրված պրոֆ. Ստամբոլյանի գիտական աշխատանքների մի ստվար մասը:

1962 թ. նա առաջինը իր սերնդակից բժիշկ-մասնագետների մեջ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն և հրատարակում «Կորոնար անբավարարության պաթոգենետիկ բուժման մասին» մենագրությունը, որտեղ առաջարկում է պսակային անբավարարության սեղատիվ բուժման ուրույն մեթոդը:

1965 թ. Ռ. Պ. Ստամբոլյանն առաջարկում է էլեկտրասրտագրի բանական վերլուծության իր ուրույն ինտեգրալ մեթոդը, որը նոր հնարավորություն

ներ ու հեռանկարներ է ստեղծում սրտաբանության հետագա զարգացման համար:

Ակադեմիկոս Ստամբոլյանի ջանքերով Երևանի տեխնոլոգիական միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտում կազմակերպվել է բժշկական էլեկտրոնիկայի բաժին, որտեղ ստեղծվել են սրտի գործունեությանը հետևող նոր սարքեր ու համակարգեր:

Պրոֆ. Ռ. Ստամբոլյանի «Կլինիկական էլեկտրասրտագրություն» դասագիրքը (1978 թ., հայերեն) 1980 թ. արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի: Նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ ակադեմիկոս Ստամբոլյանը նաև գիտության կազմակերպիչ է. 1966-1968 թթ. նա նշանակվում է Երևանի բժշկական ինստիտուտի ռեկտոր, ում եռանդուն ջանքերով իրականացվում է ինստիտուտի երկու մասնաշենքերի շինարարությունը, ինչի շնորհիվ ինստիտուտի շենքային հնարավորությունները մեծանում են 2 անգամ:

1970 թ. Ստամբոլյանը հիմնադրում է ներքին հիվանդությունների սուբօրդինատորների նոր ամբիոնը, իսկ 1980 թ. այն վերակազմավորվում է որպես ներքին հիվանդությունների թիվ 2 ամբիոն: Նրա հետևողական և նպատակասլաց աշխատանքի շնորհիվ նորակառույց հանրապետական հիվանդանոցում ստեղծվում է հանրապետությունում առաջին մասնագիտացված սրտաբանական կլինիկան՝ սրտամկանի ինֆարկտի ինտենսիվ հսկողության բաժանմունքով:

1971 թ. Ռ. Պ. Ստամբոլյանը ընտրվում է ՀՍՄՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1994 թ.՝ ակադեմիկոս:

Ակադեմիկոս Ստամբոլյանի ղեկավարությամբ պաշտպանվել են քսանհինգ թեկնածուական և երկու դոկտորական ատենախոսություններ: Նա երեք մենագրության և չորս դասագրքի, 200-ի հասնող գիտական հոդվածների հեղինակ է, որ տպագրվել են հայերենից ու արտերկրում տարբեր լեզուներով: Ռ. Ստամբոլյանը նաև ութ գյուտի հեղինակ է:

Բարձր են գնահատվել նրա վաստակն ու ծառայությունները: Նա պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով:

Ակադեմիկոս Ռ. Ստամբոլյանի պայծառ հիշատակը միշտ կմնա նրա ընկերների և աշակերտների սրտերում:

ԶԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Գ. ԶԱԼԱՇՅԱՆ

# «Նոր նախիջևանի բարբառի բացադրական բառարան»

## Կարևոր բարբառագիտական աշխատություն

Արևմտյան խմբակցության հայերեն բարբառների ծվենները այսօր էլ դեռ մանրիկ-մանրիկ հավաքելու շնորհակալ գործը շարունակվում է: Այս առումով Գևորգ Զալաշյանի վերջերս լույս տեսած «Նոր նախիջևանի բարբառի բացատրական բառարանը» (Ростов-на-Дону, 2012) մեզ համար հաճելի անակնկալ է, որովհետև կարևոր ներդրում է հայերենագիտության բնագավառում:

Մի փոքր անդրադառնա՞նք այս բառարանի ստեղծման պատմությանը, որ ինքնին ուշադրության է արժանի: Հայերենագիտությանը մինչ օրս այս բառարանի հեղինակ Գևորգ Սիմոնի Զալաշյան անունն անհայտ էր, մինչդեռ կարող էր այն իր պատվավոր տեղն ունենալ մեր երախտավորների անունների կողքին: Դաժան ճակատագիրը համառորեն հետապնդել է նաև այս տաղանդավոր հային: Բառարանի առաջաբանում Արտաշես Դազդյանը համառոտ ներկայացնում է Գևորգ Զալաշյանի կենսագրությունը: Նոր նախիջևանի հոգևոր սեմինարիայում նրա ուսուցիչների թվում էր անվանի հայագետ Յ. Աճառյանը: Տեղում 1913 թ. փայլուն ավարտելով ուսումը՝ Գ. Զալաշյանը գործուղվել է Փարիզ՝ Սորբոնի համալսարանում հռչակավոր լեզվաբան Ա. Մեյեի աշակերտելու: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը, Ռուսաստանում բռնկված բուլշևիկյան հեղափոխությունը ոչ միայն նրա համար անհնար դարձրին ուսումը շարունակելը, այլև այնուհետև դեպքերի անբարենպաստ դասավորությունը նրան մույնիսկ ստիպեցին ճաշակել Սիբիրի աքսորի դառնությունը: Կյանքի վայրկյաններին դիմակայելու համար Գ. Զալաշյանը մի շարք, հաճախ միմյանցից շատ տարբեր մասնագիտություններ է ձեռք բերել՝ միշտ էլ ցուցաբերելով բարձր մակարդակ: Սակայն նրան մշտապես հետաքրքրել են հայագիտության և հատկապես բնօրրանից կտրված ու օտար՝ ռուսական միջավայրում մահացող մայրենի բարբառի խնդիրները: Նա ժամանակին Յ. Աճառյանի օգնել է Նոր նախիջևանի բարբառի՝ հատկապես Զալթի խոսվածքի քերականական ձևերի, բառերի ճշգրիտ գրանցման հարցում: Մեծանուն լեզվաբանը, ինչպես իր հիշյալ աշխատության նախաբանում է գրում, շատ է կարևորել բարբառի իր ուսումնասիրության վերաբերյալ Գ. Զալաշյանի՝ «Զալթ գյուղից, ուսանող լեզվաբանության, աշակերտ Մեյե հայագետի» դիտարկումները (էջ 6): Նա գրում է. «Գ. Զա-

լաշեանը՝ աչքի անցկացնելով նույն բառարանը՝ նշանակեց այն բոլոր մասնավոր տարբերությունները՝ որ ներկայացնում է գիտական բարբառը»: Այնուհետև հեղինակը ավելացնում է. «...աշխատությունը կազմել պատրաստելուց հետո Գ. Զալաշեանը ծայրից ծայր կարդաց բարբառային ձևերը ... և անկասկած սխալները մատնանշելու և ուղղելու համար իրեն են պարտական» (նույն տեղում):

«Նոր նախիջևանի բարբառի բացատրական բառարան» կազմելու անթելված ցանկությունը իրականացնելուն Գ. Զալաշյանի համար խթան է հանդիսացել 1958 թ. Նոր նախիջևան այցելած ժամանակ Մարտիրոս Սարյանի հորդորը տեղացիներին՝ ձեռնամուխ լինել իրենց գաղթօջախի մշակութային ժառանգությունը փրկելուն, տեղում կազմակերպելու համապատասխան թանգարան: Գ. Զալաշյանն էլ որոշել է, մայրենի բարբառի բառարանը կազմելով, իր նպատակը բերել այդ ազգագույն գործին: Նորից մի քանի տարվա քրտնաջան աշխատանքով լրացնելով իր մոտ եղած բարբառային նյութերը՝ նա կազմել է այդ բառարանը և 1961 թ. ուղարկել ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտ՝ այն քննարկելու և հրատարակելու ակնկալիքով: Ինստիտուտը հավանության է արժանացրել Գ. Զալաշյանի աշխատությունը և որոշում կայացրել հրատարակել այն: Սակայն ինչ-ինչ պատճառներով դրա հրատարակումը ձգձգվել է ու ընդհանրապես հրատարակչական պլաններից դուրս մղվել: Բառարանի ձեռագիր օրինակը հետ պահանջելու հեղինակի դիմումներին ինստիտուտից պատասխանել են՝ այն կորել է... Իսկ 1966 թ. հայրենասեր, բազմաշնորհ Գ. Զալաշյանն իր մահկանացուն է կնքել՝ առանց տառապանքով ստեղծված աշխատանքի արդյունքը տեսնելու, առանց սրտի փափազը իրականացնելու: Բառարանի հրատարակումը իրականացվել է այն նախաձեռնությունից գրեթե մեկ դար հետո՝ մի քանի նվիրյալների համառ ջանքերի շնորհիվ: Նրանք կարողացել են այստեղից ու այնտեղից մեկիկ-մեկիկ հավաքել Գ. Զալաշյանի ձեռագրերը, որոնք դասավորելով՝ առանձնացրել են բառարանի նյութերը և մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ ամբողջական վերականգնել «Նոր-Նախիջևանի բացատրական բառարանը»:

Խնդրո առարկա բարբառային միավորը կոչում ենք Նոր նախիջևանի կամ Նորի բարբառ, իհարկե, մեծ վերապահությամբ, քանի որ այն նշված վայրերում չի ա-

ռաջացել: Ճիշտ է, այս բարբառով խոսողները Դոնի ավերակ են գաղթել Դրիմից 18-րդ դարի վերջին քառորդում, սակայն նրանց բնօրրանը Արևմտյան Հայաստանն է եղել: Ինչպես հայտնի է, պատմաբանները և հենց իրենք՝ բարբառակիրները, գտնում են, որ Դրիմի հայախոս բնակչության նախնիները հիմնականում Անի քաղաքից ու նրա շրջակա բնակավայրերից են գաղթել: Սակայն հայտնի է նաև, որ դարերի ընթացքում Դրիմ են թափանցել նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հայ գաղթականներ: Բնականաբար տեղի են ունեցել բարբառային միավորների փոխազդեցություններ, որոնք, ինչպես հարկն է, ուսումնասիրված չեն:

Գ. Զալաշյանի «Նոր նախիջևանի բարբառի բացատրական բառարանը» իր կառուցվածքով, ընդգրկած նյութի ծավալով տարբերվում է նմանատիպ այլ բառարաններից: Հայերեն բարբառների հետազոտությանը նվիրված մենագրություններում սովորաբար ներկայացվում է նաև տվյալ բարբառի բառարանը՝ հիմնականում գրաբար-բարբառ անցումով: Տրվում է նաև, հաճախ բավական հակիրճ, այսպես կոչված, բարբառային նորաբանությունների և օտար փոխառությունների ցանկը միայն: Այդպիսով բարբառի բառապաշարի նկարագրությունը ամբողջական չի լինում: Դա հավանաբար պայմանավորված է նաև հրատարակիչների՝ հրատարակվող նյութը հնարավորինս սեղմելու պահանջով: Գ. Զալաշյանն իր բառարանում շատ ավելի լայնորեն է ընդգրկել նշված բառաշարերը իրենց խոսվածքային տարբերակներով՝ ուշադրություն դարձնելով նաև նորաբանություններին, նորագույն փոխառություններին, որ բարբառագիտական աշխատություններում հաճախ անտեսվում են: Այս բառարանը հարուստ է նաև բարբառային դադվածքներով: Իսկ Գ. Զալաշյանի բառարանի հիմնական յուրահատկությունը բայերն իրենց անդեմ և դիմավոր ձևերով ներկայացնելն է: Բացի այդ, հեղինակը առանձին բառահոդվածներով հաճախ տալիս է տվյալ բայի այս կամ այն անդեմ ձևի գործառական և իմաստային նրբերանգները:

Գևորգ Զալաշյանը, որ մասնակցել է Հ. Աճառյանի վերոհիշյալ հետազոտության աշխատանքներին, այնուամենայնիվ որոշել է ինքնուրույն ձեռնարկել նմանատիպ մի գործ: Արդյոք մեծանուն գիտնականի հետազոտությունը բավարար չի՞ համարել, թե՞ այդ աշխատանքի հրատարակված չլինելը միշտ մտահոգել է նրան՝ դրա կորստով կորցնել նաև մայրենի բարբառը:

«Նոր նախիջևանի բարբառի բացատրական բառարանը» ունի, իհարկե, նաև թերություններ, որոնք հիմնականում տեխնիկական են՝ պայմանավորված աշխատության ողիսականով: Հայագետները, համոզված են, միայն երախտագիտության խոսք կարող են ուղղել այս դժվարին գործը իրականացնողներին:

Ս. ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

## «Զահուկյանական ընթերցումներ» գիտական հերթական նախաշրջանը

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ արդեն յոթ տարի ավանդույթ դարձած «Զահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական հերթական մատչելիք: Նստաշրջանին ներկա էր և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը:

Լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը բացման խոսքում շնորհակալություն հայտնեց բոլոր ներկայներին, որոնք իրենց աշխատանքով նպաստում են հայերենագիտության զարգացմանը, հայոց լեզվի մշակմանն ու կանոնարկմանը:

Երբ օր տևած գիտական 6 միստերում լսվեցին մոտ երեք տասնյակ զեկուցումներ:

Զեկուցումներով հանդես եկան ինչպես լեզվի ինստիտուտի աշխատակիցները, այնպես էլ հանրապետության տարբեր բուհերի ներկայացուցիչներ:

Զեկուցումներն ամփոփում էին հայերենի առանձնահատկություններին նվիրված ուշագրավ ուսումնասիրությունների, արդյունքները, մեծ մասամբ աչքի էին ընկնում խոր ընդհանրացումներով, նյութի մանրամասն ընդգրկմամբ: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում Վ. Համբարձումյանի «Բառաբանական դիտարկումներ Ե. Մեղրեցու «Բառգիրք հա-

յոցի» մի քանի բառի վերաբերյալ», Լ. Հովհաննիսյանի «5-րդ դարի հայ մատենագրության մեջ օտար բառերի մեկնության հարցի շուրջ», Ն. Հովհաննիսյանի «Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների նյութի հիման վրա)», Վ. Կատվայանի «Բայագետի և Դիաղիմի բարբառների փոխհարաբերությունները» զեկուցումները, որոնք հագեցած էին լեզվական հանդիչ փաստերով, արժարժում էին գիտական հնչեղության հարցադրումներ:

Առանձնապես պետք է նշել, որ զեկուցումների բովանդակությունը թեմատիկ բոլոր ընդգրկումներով վկայում էր, որ «Զահուկյանական ընթերցումներ» գիտական մատչելիքն ունի շատ ասելիքներ ունի, մնում է մեր շնորհակալական խոսքն ասել և արժևորել մեր մեծերի գիտական վաստակը:

Նստաշրջանից մի քանի օր անց ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտական 2-րդ մատչելիք, որի աշխատանքներին մասնակցեցին ԳԱԱ լեզվի ինստիտուտի գրեթե բոլոր երիտասարդ գիտականակները, հայցորդներ ու ասպիրանտներ, ինչպես նաև գիտակրթական այլ օջախների՝ Երևանի պետական համալսարանի, Երևանի մանկավարժական համալսարանի, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի մանկավարժական ինստիտուտի երիտասարդ գիտնականները:

Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Համ-

բարձումյանն իր բացման խոսքում կարևորեց նմանատիպ մատչելիքների կազմակերպման և շարունակականության հանգամանքը, քանի որ վերջիններս բացահայտում են երիտասարդ լեզվաբանների մասնագիտական պատրաստականությունը, հնարավորություն ընձեռում իրենց ներկայացնելու գիտական ասպարեզում:

Լսվեց շուրջ 2 տասնյակ զեկուցում, որոնց նպատակը լեզվի կարևորագույն խնդիրները գիտական ճշգրտությամբ և խորությամբ գնահատելն ու լեզվաբանական հարցերը տարբեր տեսանկյուններից մեկնաբանելն էր: Երիտասարդ գիտնականները իրենց ողջ ուժն ու եռանդն էին ներդրել ուսումնասիրությունների համար, որոնք, անկասկած, արժևորվում էին ոչ միայն բովանդակային առումով, այլև կարևորվում լեզվի այս կամ այն խնդրի վերահամամբ, գնահատմամբ և ըստ հնարավորին լուծմամբ:

Գիտական մատչելիքներում բարձրացվեցին հայոց լեզվի մաքրության, ինչպես նաև զարգացմանը վերաբերող բազմազան խնդիրներ, վիճաբարության հարցեր: Կարևորվեցին տարբեր բնագավառներում նորանոր տերմինների առաջացումն ու ճշգրտումը, բարբառներից և ժողովրդագիտական լեզվից անցած բառերի տեղին գործածության հարցերը: Կատարվեցին զեկուցումներ լեզվի բառապաշարի վերլուծություններ («Հուլիանոսի փոխառությունները», «Հուլիանոսի փոխառությունները», «Հուլիանոսի փոխառությունները»):

4. Առաքելյան, բացահայտվեցին գրողների կողմից ստեղծված նորանոր բառեր («Նորակազմ բառերը ու միջնադարի երկու բժշկարաններում», Գ. Թադևոսյան) և դարձվածային միավորներ ոչ միայն արևելահայերենում, այլև արևմտահայերենում («Սկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» գրքի լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ», Ա. Եմին-Տերյան), լեզուն քննվեց նաև արդի հայերենի գրական երկու տարբերակները զուգորդելու տեսանկյունից («Ներգործական սեռը արևելահայերենում և արևմտահայերենում», Տ. Սաֆարյան): Մի քանի զեկուցումներում առաջ քաշվեց լեզուն օտար բառերից ու արտահայտություններից մաքրելու և «բեռնաթափելու» խնդիրը, որն արժանի է ամենայն ուշադրության («Օտար բառերի գործածությունները իրադրային արտահայտություններում», Լ. Ղանդյան, «Ժամանակակից հայերենի կանոնարկման որոշ հարցեր», Ն. Վարդանյան):

Միջոցառումն անցավ ակտիվ քննարկումների և հետաքրքիր հարցադրումների մթնոլորտում մտքերի աշխույժ փոխանակությամբ:

Ամփոփելով գիտական մատչելիքի արդյունքները՝ Վազգեն Համբարձումյանը երիտասարդ լեզվաբաններին մաղթեց նորանոր հաջողություններ, գիտակցված գործելու կարողություն և նպատակային գործունեության իրականացում: Իսկ այդ ամենը երիտասարդներից պահանջում է առավել խոր գիտելիքներ:

Լուսինե ՂԱՍՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ցեղիտների կիրառությունը ոչ միայն բարձրացնում է կենդանիների մատակարարումն ու կաթնատվությունը, այլև բարելավում է կաթի և մսի որակը:

Ընթերցողներին մոտ կարող է առաջանալ մի շատ բնական հարց. ի՞նչ են կատարում բնական ցեղիտները կենդանիների օրգանիզմում, որ այդպիսի լավ արդյունք է ստացվում: Պատասխանենք.

- Առաջինը՝ ցեղիտների բյուրեղային ցանցում առկա են ծակոտիներ (մասնագետները դրանք անվանում են պատուհաններ), որոնց մեջ տեղադրված են կալիումի, կալցիումի, մատրիումի և մագնեզիումի կատիոններ: Ցեղիտները կենդանիներին են տալիս միկրոքանակներով այդ կատիոնները, որի հետևանքով էլ ծա-

ցեղիտների կիրառման հիմնախնդիրներն ունեն կարևոր տնտեսական նշանակություն և մասնակիորեն շոշափում են ցեղիտների հանքարդյունահանման հարցը, նախարարությունը նշված հիմնախնդիրների լուծմանն արդեն իսկ օրենսդրական ընթացք է տվել, և Տավուշի մարզի ցեղիտային տուֆերի հանքավայրի՝ Նոր Կողբի տեղամասի շահագործման համար «Դավ» ՍՊԸ-ն տրամադրել է հանքարդյունահանման թույլտվություն ՅԱ-Լ-14/259): Ինչ վերաբերում է բնական ցեղիտների կիրառմանը ատոմային էներգետիկայի բնագավառում, ապա այն հնարավոր կլինի դիտարկել միայն ամբողջական հետազոտություններ և համապատասխան փորձարկումներ անցկացնելուց, ինչպես նաև ատոմային էներգիայի ոլորտը կարգավորող՝ օրենսդրությամբ սահմանված թույլտվություններ ստանալուց

անդրադարձել ենք բայց, քանի որ Դուք կրկնում եք այդ անհեթեթությունը, ստիպված պատասխանում ենք Ձեզ, ինչպես նաև պարոններ Մակարյանին և Ղազարյանին: Այդ ի՞նչ հրեշավոր հիմնադրություն ունեն բնական ցեղիտները, որ 63 տ մեկ հեկտար հողատարածքում այնքան կարող են բարձրացնել քանակով իրենցից 100 անգամ ավելի հողերի հիմնայնությունը, որ փչացնեն դրանք: Պարոնայք Պողոսյանների համար պատասխան պատրաստողի, Ռ.Մակարյանի-ն նշված «ստեղծագործության» հեղինակ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Յ.Ղազարյանի համար ներկայացնենք մի պարզ հաշվարկ. 63տ ցեղիտը մեկ հեկտար հողատարածքում (արմատաբնակ բուսահողի հաստվածքը 50 սմ) բուսահողի հիմնայնությունը կարող է բարձրացնել.

## Գիտությունը առաջարկում է, «Քյուղնախարարությունը՝ անպրեսում

Բնական ցեղիտների կիրառության հարցում ՀՀ գյուղնախարարության վարքագծի մասին

կոտիները (պատուհանները) ազատվում են դրանցից,

- երկրորդը՝ ցեղիտները կենդանու օրգանիզմից նշված ծակոտիներով կլանում են կերի հետ թափանցած ծանր մետաղներն ու ռադիոակտիվ տարրերը և դուրս բերում դրանք կենդանու օրգանիզմից,

- երրորդը՝ ցեղիտները կլանում են կենդանու մարսողության ընթացքում առաջացող գազերը և դուրս բերում դրանք:

Այս բոլորի արդյունքով կենդանիներն ազատվում են թունավոր ու խիստ վտանգավոր ծանր մետաղներից, ռադիոակտիվ տարրերից և գազերից, արգելակում են դրանց թափանցումը արյան մեջ, կենդանիներին ազատում են թունավորումներից և այլ հիվանդություններից և նպաստում են կենդանիների նորմալ աճին:

Այս «հիշեցում-առաջարկությունը» մինչ ՀՀ կառավարության ուղարկելը, ավելի ընդարձակ տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթում, որտեղ, հողվածի եզրափակիչ խոսքում մենք մեր մտահոգությունն էինք հայտնել այն մասին, թե «կկիրառվե՞ն արդյոք ՀՀ բնական ցեղիտները անասնակերի մեջ»:

Ինչպես տեսնում ենք, մեր «հիշեցում-առաջարկության» առաջին էջում գրվածը ընդհանուր տեղեկություն է բնական ցեղիտների և դրանց հնարավոր կիրառության ոլորտների մասին: Թվարկված 11 կետերի մեծ մասի բովանդակությունը չի առնչվում գյուղատնտեսության ոլորտին, և գյուղատնտեսության պարոնայք բոլորովին էլ պարտավոր չէին և չպետք է շոշափեին դրանց օգտագործման հարցերը: Սակայն, այնպես է ստացվել, որ գյուղնախարարության գիտության և կրթության վարչության պետի պաշտոնակատար պարոն Զ.Գաբրիելյանը, արդի ծառայություն մատուցելով փոխնախարարին, մեր առաջարկությանը պատասխան պատրաստելիս չի բարեհաճել մինչև վերջ ընթերցել այն և անհեթեթ պատասխաններ է ներառել: Գրել է այն մասին, որը նշված նախարարության հետ բոլորովին չի առնչվում, օրինակ՝ ցեղիտների կիրառությունը ատոմային էներգետիկայում և չի գրել հիմնական առաջարկության մասին, այն մասին, որ նախարարությունն ընդունում է արդյոք ցեղիտների արդյունավետությունն անասնակերում կիրառելու պարագայում և, կներդնի՞ այն անասնապահության և անասնաբուծության գործում: Մեզ ուղարկած պատասխանից չեն երևում այդ հարցերի պատասխանները: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վ. Հարությունյանին ուղարկված պատասխանը՝ փոխնախարար պարոն Ա.Պողոսյանի ստորագրությամբ, բերում ենք ամբողջությամբ:

«Հարգելի՛ պարոն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Ձեր կողմից ՀՀ վարչապետ պարոն Տ. Սարգսյանին հասցեագրված 03.04.2012թ. 111 2469-17 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ ցեղիտների կիրառման հարցը դեռևս 2011 թվականին քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հողագիտության ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում, որի վերաբերյալ ներկայացվել էր եզրակացություն: Եզրակացության համաձայն՝ ցեղիտի զանգվածային կիրառումը բոլոր հողատեսքերում, մասնավորապես ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ունեցող հողերում անթույլատրելի է: Առաջարկված բարձր նորմաների կիրառումը կհանգեցնի հողերի հիմնայնության բարձրացմանը, իսկ ցածր նորմայի դեպքում այն չի կատարի խոնավության, սննդատարների և ծանր մետաղների կլանում: Միաժամանակ անասնաբուծության բնագավառում բնական ցեղիտների կիրառման արդյունավետությունը բազմիցս ապացուցվել է գիտաարտադրական փորձարկումներով:

Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կարծիքի՝ բնական



հետո:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը բնապահպանական և առողջապահական տեսակետներից արդիական է համարում «Բնական ցեղիտների կիրառման հիմնախնդիրները» թեման և տեղեկացնում, որ դեռևս 1999-2002 թվականներին «Ագրոսիլ» ՍՊԸ-ի կողմից կազմակերպվել է ցեղիտների հիմքի վրա պարարտանյութերի արտադրություն, սակայն գործունեությունը դադարեցվել է համապատասխան պայմանների բացակայության հետևանքով, իսկ ներկայումս Երևանի պետական համալսարանում շարունակվում են գիտական հետազոտությունները ցեղիտներից բազմատարր պարարտանյութի ստացման ուղղությամբ:

Համալսարանի կողմից պարարտանյութի կիրառման տնտեսական արդյունավետության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտական կազմակերպություններում կիրականացվի պարարտանյութերի փորձարկում»:

Նախարարի տեղակալ՝  
Ա. Պողոսյան

Եվս մեկ հարց, պարոն Գաբրիելյանին.

ՀՀ կառավարությանն ուղարկված մեր «հիշեցում-առաջարկությունում» մենք թվարկել ենք բնական ցեղիտների կիրառության 11 ուղղություններ (ոլորտներ), Դուք Ձեր պատրաստած պատասխանում անդրադարձ եք կատարել դրանցից երկուսին՝ ցեղիտների օգնությամբ պարարտանյութեր պատրաստելուն և ատոմային էներգետիկայում դրանց կիրառությանը: Հարց.

- Եթե Դուք Ձեզ իրավունք եք վերապահել անդրադառնալ ցեղիտների կիրառությանը ատոմային էներգետիկայում, որը Ձեզ բոլորովին չի վերաբերում, և Դուք այդ հարցը չպետք է շոշափեիք, ինչո՞ւ չենք անդրադարձել մյուս 9 ճյուղերին՝ կատալիզատորներ և դրանց կրողներ պատրաստելուն, որպես աղսորբներ նախատեսվածները մաքրելու համար, ցեղիտի, լիթիումի, ռութիլիումի և մի քանի ծանր մետաղների ընտրովի տարանջատմանը, բնական այրվող գազերի չորացման աղսորբներներին, այլ տիպերի ցեղիտների սինթեզմանը և այլն, և այլն:

Մեզ զարմանք պատճառեց այն, որ Դուք կրկնել եք «Հ.Պողոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Յ.Ղազարյանի այն անհեթեթ մտահղացումը, թե «ցեղիտի մասսայական կիրառումը բոլոր հողատեսքերում, մասնավորապես ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ունեցող հողերում անթույլատրելի է: Առաջարկված բարձր նորմաների կիրառումը կհանգեցնի հողերի հիմնայնության բարձրացմանը, իսկ ցածր նորմայի դեպքում այն չի կատարի խոնավության, սննդատարների և ծանր մետաղների կլանում»:

- թույլ թթու (pH=6,5) հողերում 6,5-ից կարող է բարձրացնել մինչև 6,521-ի (ընդամենը՝ 0,021 միավորով),

- չեզոք հողերում (pH=7) 7-ից մինչև 7,017-ի (ընդամենը՝ 0,017 միավորով),

- թույլ հիմնային (pH=7,5) հողերում՝ 7,5-ից մինչև 7,5125-ի (ընդամենը՝ 0,0125 միավորով),

- հիմնային հողերում (pH=8) 8-ից մինչև 8,008-ի (ընդամենը՝ 0,008 միավորով):

Եթե ընդունենք, որ արմատաբնակ բուսահողի հաստվածքը կազմում է ոչ թե 50, այլ 30 սմ, ապա.

- թույլ թթու հողերում՝ 63տ/հա ցեղիտը բուսահողի հիմնայնությունը 6,5-ից կարող է բարձրացնել մինչև 6,535-ի (ընդամենը՝ 0,035 միավորով),

- չեզոք հողերում՝ 7-ից մինչև 7,028-ի (ընդամենը՝ 0,028 միավորով),

- թույլ հիմնային հողերում՝ 7,5-ից մինչև 7,521-ի (ընդամենը՝ 0,021 միավորով),

- հիմնային հողերում՝ 8-ից մինչև 8,014-ի (ընդամենը՝ 0,014 միավորով):

Ինչպես տեսնում եք, որքան մեծանում է հողի հիմնայնությունը, այնքան փոքրանում է ցեղիտների ազդեցությունը հողի հիմնայնության բարձրացման վրա: Այժմ ես դիմում եմ վերջ նշված պարոններին.

Ասացե՛ք, մեծարգո՛ պարոնայք, այդ 63տ/հա ցեղիտը որքանո՞վ է փչացնում ձեր հողերը:

Այն մասին, որ «ցածր նորմայի դեպքում չի կատարվի խոնավության, սննդատարների և ծանր մետաղների կլանումը», պետք է նշենք, որ սա դիլետանտ մարդու կողմից գրված մի նոր անհեթեթություն է: Եթե պարոն Ղազարյանը «ցածր նորմա ասելով» նկատի է ունեցել 45տ/հա ցեղիտի քանակը, ապա նա պարտավոր էր շատ ուշադիր կարդալ մեր առաջարկը, որտեղ հաշվարկ էր ներկայացված 45տ/հա ցեղիտի խոնավություն պահելու մասին, իսկ «սննդատարների և ծանր մետաղների կլանման համար նա պետք է, որ ծանոթ լիներ հանրահայտ մոլլա Նասրեդդինի այն արտահայտությանը, թե «շատ ներակրուին շատ աղ է պետք, քիչն՝ քիչ»:

Քանակով շատ ցեղիտը ծանր մետաղներ, թունահարույց տարրեր և ռադիոակտիվ իզոտոպներ կարող է կլանել շատ, իսկ քիչ ցեղիտը՝ քիչ: Բայց որ



այն («ցածր նորմայի ցեղիտը») չի կլանի բոլորովին, արսուրդ է (անմիտ արտահայտություն):

Մեզ մոտ տպավորություն է ստեղծվել, որ գյուղնախարարությունում որոշակի պաշտոնատար անձինք ամեն ինչ անում են «ներքևից»՝ եկող առաջարկությունները ծախողելու (չներդնելու) համար: Չգիտեմ՝ դա թշնամություն է այս հանրապետության հանդեպ, նախա՞նձ առաջարկություն ներկայացնողների հանդեպ, թե՞ անբանություն և անգործություն:

Հրայր ԱՎԱԳՅԱՆ  
Երկրաբանահանրաբանական  
գիտությունների դոկտոր



## ԵՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Օրերս Արհմիությունների համընդհանուր կոնֆերանսի 20-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի Դաշնության արհմիությունների կոնֆերանսի 33 գիտությունների ազգային ակադեմիայի միացյալ արհկոմի նախագահ Կիմա Միքայելյանին պարզևատրել է «ԱՅԿ-20 տարի» արծաթյա հուշամեդալով:

Այս առթիվ շնորհավորելով Կիմա Միքայելյանին, հավելեմք, որ սա նրա արդեն երրորդ պարզևն է:

## Քննարկում ՀՀ ԳԱԱ-ում՝ նվիրված Համաշխարհային IPv6 մեկնարկին

33 ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ քննարկում՝ նվիրված արդիական խնդրի՝ օգտագործվող Ինտերնետային հասցեների սպառմանը: Քննարկվեցին Ինտերնետի հայկական հատվածի ցանցային ենթակառուցվածքների և ծառայությունների պատրաստվածությունը նոր IPv6 հաղորդակարգի մեկնարկին: Քննարկումը կազմակերպել էին 33 ԳԱԱ-ի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը և «Ինտերնետ հանրություն» 34-ն: Քննարկմանը հրավիրված էին այդ ոլորտում Հայաստանի առաջատար ընկերություններ:

Որոշ հաշվարկներով 2015 թ.-ի Ինտերնետի մուտք ունեցող սարքերի թիվը կանցնի 15 միլիարդը: Ներկա պահին օգտագործվող IPv4 տեսակի հասցեները բավարար չեն: Նոր IPv6 հասցեները հնարավորություն են տալիս Ինտերնետի մուտք տրամադրել ավելի շատ ցանցային սարքերի և համակարգիչների:

33 ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

# ՀԱՅՐԵՆԻՔ, ԹԵ՛...

➤ 7 յան» ընդհանուր երևույթ է: Անկասկած է, որ շարքային հայր իրեն զգում է միայնակ, «անտուն» իրենից օտարված իշխանության և կապիտալի աշխարհում, որոնք բազմապատկում են նրա հոգսերը, երկյուղներն ու ակնկալությունները, նրա պայքարն ու պարտությունները, նրա դատապարտվածությունը:

Տպավորությունն այն է, որ սեփականը, յուրայինը, ցեղատոհմիկ հայկականությունը վերածվել է արտաքին մի բանի, հայրենիքը՝ մեր «վաթանը», դարձել է մեզանից օտարված մի «արտաքին» աշխարհ, քանի որ նորահայրենիքի կերտման ու բարգավաճման կոչերի ու «կոչական» վերափոխումների մեջ շարքային հայր (հասկացի՛ր՝ ժողովուրդը) անտեսված ու արհամարհված է տեսնում իրեն, իր ընտանիքը:

Ազգային դիմազրկման համապարփակ գործընթացը հղի է մեկ այլ վտանգով ևս, քան զուտ դիմազրկումը և ցինիզմը: Դա նույն դիմազրկմամբ պայմանավորված դիմակավորումն է: Մարդը, եթե չունի իր իսկական ազգային դեմքը, եթե օտարված է ինքն իրենից և ուրիշներից, դառնում է ինքն իր պատյանի մեջ մտած՝ պատենավոր արարած, ով յուրաքանչյուր անգամ, ըստ պահի և օգտապաշտության, ընդունում է մեկ այս, մեկ այն դեմքը: Սեփական ես-ի, ինքնության կորուստը հիշեցնում է ամերիկացի պոետ Ալեն Գինզբերգի տողերը.

Որտե՞ղ փնտրեմ օրենք՝ պետության մո՞տ,  
հեռագրաց բյուրոկրատիայի գրասենյակներու՞մ,  
հոգուս ծանրությա՞ն, թե՞ արցունքներիս մեջ,  
ինքս ինձ նվիրած սքանչական երգերու՞մ,  
որ նաև նվիրում եմ ոստիկանությանս, օրենքիս,  
պետությանս,

բազմաթիվ եսերիս...

Ահագնացող դիմազրկությունը և աճող անբավարարվածության զգացումը, որ համակել է շատ-շատերին, հաճախ կորցնում է քննադատության իր ճշգրիտ հասցեն,

ծեռք է բերում վերացական բնույթ: Քննադատության թիրախներ են դառնում ընդհանուր, մանվածապատ, կոնկրետ հայի համար անորոշ եզրույթներ, ինչպիսին են «ժամանակակից կյանքը», «ժողովրդականացվող հայ հասարակությունը» և այլն: Անհասցե, անպատասխանատու չարախոսությունների սիրահարներին նկատի ունենալով՝ Իոսիֆ Բրոդսկին (1988-ին Միջիգանի համալսարանում կարդացած իր ծառում) ասել է. «... մտածե՛ք գոնե անպատասխանատվության այն վակուումի մասին, որը հեշտությամբ լցնում են չարքերն ու դատարկախոսները...»:

Շարքային հայր, թեկուզև դժգոհ է և հիասթափված իշխանություններից, սակայն դեռևս չի կայացել իբրև գիտակից, արժանապատիվ և մարտունակ զանգված: Նա ամենևին չի պատկերացնում, թե ինչպիսին պիտի լինի հայ հասարակության վաղվա օրը: Ծայրաստիճան անորոշ և հեղիեղուկ են նաև Հայաստանի կառավարող ընտրախավի կամ «բարձր դասակարգի» գաղափարախոսական դիրքերը: Եթե կարելի է ինչ-որ բան ասել նրա ընթացիկ, կոնյուկտուրային քաղաքական կողմնորոշումների մասին, ապա նույնը չի կարելի ասել գաղափարախոսական դիրքորոշումների, երկրի համակարգային արդիականացման ռազմավարական մոդելի մասին: Այդպիսիք պարզապես չկան կամ առ այսօր չեն հնչեցվել: Թերևս ժամանակն է հիշելու մեծ լուսավորիչ Խ.Աբովյանի մարգարեական խոսքերը. «Մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառը էս ա, որ մեկ ասող չի ըլում՝ թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ինչի՞ համար ենք եկել աշխարհ. բոռ գալիս ենք, բոռ գնում»:

Ի՞նչն է խոսում մեծ հայի մեջ՝ պատմության կա՞նչը, թե՞ ազգի «հողեղեն» մարմնի ցավը: Կարծում եմ՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Մամուկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

## Քո ընկերը «Շանհայի գայլն» է

Պեկինի իշխանությունները ավտոբուսների վարորդներին, տոմսավաճառներին, գանձապահներին արգելել են ուղևորներին դիմել «ընկեր» բառով:

Սա նշանակում է, որ մոտ ապագայում վարորդները և գանձապահները պարտավոր են հետ վարժվել կոմունիստական սովորական բառապաշարից և ուղևորներին դիմել «պարոն» կամ «տիկին» կոչականներով:

Ընդունված որոշման մեջ ասվում է, որ «ընկեր» բառը այլևս չի համապատասխանում ուղևորների սպասարկման ներկայիս պահանջներին: Հայտարարության մեջ նաև նշվում է, որ երիտասարդների ժարգոնում «ընկեր» բառը «գեյ» բառի հոմանիշն է:

Որոշման մեջ հաստիվ նշվում է, որ բացառություն կարելի է անել և «ընկեր» բառով դիմել տարեց չինացիներին, որոնք փոքր հասակից վարժված են դիմելու այդ եղանակին:

## Երկրաբանները պարզեցին Քրիստոսի մահվան ճշմարիտ թվականը

Գերմանիայի և Միացյալ Նահանգների երկրաբանները հայտարարել են, որ որոշել են Քրիստոսի խաչելության իրական ժամանակը: Նրանց հետևությունները հիմնված են Մեռյալ ծովի տարածաշրջանում սեյսմիկ ակտիվության հետազոտության արդյունքների վրա:

Գերմանացի գիտնականների տվյալներով Քրիստոսի խաչելությունը և մահը խաչի վրա տեղի են ունեցել մեր թվարկության 33 թվականի ապրիլի 3-ի ուրբաթ օրը: Երկրաբանները տարածաշրջանի սեյսմիկ տվյալները համեմատել են Նոր կտակարանի տեքստի և աստղագիտական դիտարկումների հետ:

Ըստ ժամանակագրության, Մեռյալ ծովի տարածքի այն հատվածը, որ գտնվում է Երուսաղեմից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա, սեյսմիկ առումով հատկապես ակտիվ է եղել մինչև մեր թվարկությունից առաջ 31 թվականը, ու նաև նոր թվարկության 26-36 թվականները: Հայտնի է, որ երկրորդ երկրաշարժը տեղի է ունեցել այն օրերին, երբ Հրեաստանի կուսակալն էր Պոնտացի Պիղատոսը: Քրիստոսի մահը այդ օրերին հաստատում և վկայում են չորս ավետարանիչների և հռոմեական պատմիչ Տացիտի տեքստերը:

Երկրաբանների պնդմամբ և ինչպես նշված է Ավետարանում, խավարը, որով պատվեց Գողգոթան Քրիստոսի մահվանից հետո, առաջացել էր ավազե մրրիկից, որը այդ տեղանքում սովորական երևույթ էր:



## Ադ՝ լարդպայիս արժուհիների՞

Լոնդոնի առևտրի կենտրոններից մեկում առաջարկում են համտեսել ուտեստ, որը համեմված է մարդկային արցունքներից ստացված աղով:

Ինչպես պնդում են ընկերության ներկայացուցիչները, այդ աղը ստացվել է մարդկային թարմ արցունքներից՝ գոլորշիացման եղանակով: Ըստ որում, աղը կարելի է ընտրել ըստ քիմիքի՝ աղ չարության արցունքներից, աղ՝ վիատության արցունքներից, ծիծաղի, սոխի, փռշտալու արդյունք արցունքներից:

Հայտնի չէ, այդ աղը իսկապես ստանում են մարդկային արցունքներից, թե՞ այն պարզապես գովազդային հնարանք է: Սակայն կա մի հանգամանք, որը հիրավի կարող է արցունք քամել մարդու աչքերից. ուտեստների ամեն մի բաժինը արժե 37,5 ելրո:

## ԺԳԹՏՆԵՐ

☺

Թատրոնում մարել են լույսերը, և լրիվ մթության մեջ ներկայացումն սկսված է: Քիչ անց երրորդ կարգից լսվում է մի բարձր ձայն.

- Բժի՜շկ, դահլիճում կա՞ բժիշկ:

Վերնահարթակից մի ձայն պատասխանում է.

- Ես բժիշկ եմ, ի՞նչ է պատահել:

- Սիրելի՛ բարեկամ, այս ի՞նչ գիբիլ են ցույց տալիս մեզ...

☺

Ավտոբուսում.

- Ներեցե՛ք, Դուք իջնո՞ւմ եք:

- Իսկ ձեր ի՞նչ գործն է:

- Բայց, ախր, ես պիտի իջնեմ:

- Իսկ իմ ի՞նչ գործն է:

☺

Կու-կու կանչող պատի ժամացույց գնեցի: Պարզվում է՝ ճապոնական է, կուկուն՝ նույնպես: Հիմա ժամը մեկ կուկուն ճշում է՝ «Բանգայ» և փորձում է դուրս պրծնել ժամացույցի միջից և իրեն գետնովը տալ:

☺

Ինչպե՞ս իմանալ ով լինելը նրանց, որոնք քեզ հանդիպում են գժանցի միջանցքում, և որոնց վրա թքում է կողքից անցնող գիծը:

1. Եթե վերջինս սարսափահար նետվում է մի կողմ, նա սովորական այցելու է:

2. Եթե սկսեց գոռալ և հայիոյել, մեկ ուրիշ հիվանդ է:

3. Եթե տեղնուտեղը հասցրեց հիվանդի մռութին, հիվանդանոցի սանիտարն է:

4. Եթե ի պատասխան թքեց հիվանդի վրա, հաստատ բուժող բժիշկն է:

Գիտություն Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է փապարության՝ 18. 07. 2012 թ.:  
Տպաքանակը՝ 500:

"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА